

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2019 թ. դպրոցական օլիմպիադայի
մարզային (քաղաքային) փուլի
(տևողությունը – 150 րոպե)

9-րդ դասարան

1. Երկու կետերի իրական հեռավորությունը 4800 կմ է: Դրանց հեռավորությունը 1 : 8 000 000 մասշտաբի քարտեզում կլինի.....1 միավոր
1. 0,6 սմ, 2. 6 սմ, 3. 60 սմ, 4. 600 սմ
2. Գետի ակունքի բարձրությունը 3200 մ է, իսկ գետաբերանինը՝ 800 մ :
Նրա երկարությունը 120 կմ է:.....2 միավոր
ա) որոշել գետի անկումը
բ) որոշել գետի թեքությունը
3. Որոշել ցորենի ցանքատարածությունների մակերեսը (հեկտարով), եթե ցորենի համախառն բերքը 40 000 տոննա է, իսկ միջին բերքատվությունը՝ 50 ց/հա.....1 միավոր
4. Երկրի տարածքը 36 հազ. կմ² է, երկաթուղային ցանցի միջին խտությունը՝ 2,5 կմ/կմ² :
Որքա՞ն է երկաթուղիների երկարությունը.....1 միավոր
5. Գրել Արևմտյան Եփրատի հովտում գտնվող դաշտերի համարները.....1 միավոր
1. Կարնո 2. Մշո
3. Ալաշկերտի 4. Բասենի
5. Կամախի 6. Երզնկայի
7. Մասրիկի 8. Դերջանի
6. Ալեքսանդրիա և Սանկտ Պետերբուրգ քաղաքները գտնվում են նույն միջօրեականի վրա (արլ. ե. 30°) : Դրանցից առաջինը գտնվում է հս. լ. 30°-ի, իսկ երկրորդը՝ հս.լ. 60° ի վրա: Որոշել քաղաքների միջև եղած հեռավորությունը կիլոմետրով.....1 միավոր
7. Երկրի բնակչության թիվը 9 մլն. մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 150 մարդ/կմ²: Որքա՞ն է երկրի տարածքի մակերեսը.....1 միավոր
8. Ժամային գոտիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ.....1,5 միավոր
 1. Ժամային գոտիները սահմանազատվում են գուգահեռականներով, որոնք իրարից հեռու են 15° :
 2. Ժամային գոտիների սահմանները ցամաքի վրա անցկացվում են պետական կամ վարչական սահմաններով:
 3. Լոնդոնը 1 – ին ժամային գոտում է:
 4. Մագելանի արշավախումբը 1 օր կորցրել էր, որովհետև նավարկել էր արևելքից արևմուտք ուղղությամբ:
 5. Զրոյական կամ 24-րդ ժամային գոտին գտնվում է արևելյան երկայնության 7° 30' - 22° 30' միջօրեականների միջև:
 6. Ամսաթվի փոփոխման գիծն ընդունված է անցկացնել 180° միջօրեականով, Բերինգի նեղուցով անցնող միջօրեականով և շեղումներով:

- 9. Աշխարհի բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.....1,5 միավոր**
1. Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է երկրի պետական կառուցվածքով:
 2. Զարգացած երկրների մեծ մասում բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:
 3. Ցանկացած երկրի բնակչության սեռատարիքային կառուցվածքը կախված է բնակչության վերարտադրության բնույթից:
 4. Ռասաների բնութագրիչ հատկանիշներն են լեզուն, մշակույթը և կրոնը:
 5. Ժամանակակից խառը ռասաների ներկայացուցիչները մեծ տարածում ունեն Լատինական Ամերիկայում:
 6. Տարաբնակեցման վրա ազդող հիմնական և որոշիչ գործոնը տնտեսականն է՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և սպասարկման ոլորտը:

- 10. Տրվածներից առանձնացնել բնական, հասարակական և բնահասարակական աշխարհահամակարգերի խմբերը.....3 միավոր**
- տափաստան, ջրամբար, տնտեսական շրջան, անտառ, բազմամյա տնկարկ, մարգագետին, քաղաք, լիճ, արդյունաբերական շրջան, գործարան, արգելոց, ջերմոց:

- 11. Տրվածներից առանձնացնել փոխակերպային, հրային (մագմային) և նստվածքային անօրգանական ծագման ապարների խմբերը.....3 միավոր**
- ավազ, մարմար, գրանիտ, օբսիդիան, կավ, տուֆ, գնեյս, նավթ, բյուրեղային թերթաքար, բազալտ, կվարց, կրաքար, կերակրի աղ, տիղմ, քարածուխ, կավիճ

- 12. Տրվածներից ո՞ր ծովերն են պատկանում Ատլանտյան օվկիանոսի ավազանին.....1 միավոր**
- Ազովի, Անդամանյան, Թասմանի, Ռոսսի, Կարիբյան, Բոֆորտի, Սարմարա, Կորալյան, Ուելդելի, Բարենցի, Դեղին, Սուլավեսի

- 1. Ավտոմոբիլային ընկերություն – պետություն» գույգերից ընտրել սխալը.....1 միավոր**
- | | |
|-----------------------|---------------------|
| 1. «Տոյոտա» - Ճապոնիա | 2. «Պեժո» - Ֆրանսիա |
| 3. «Ֆորդ» - ԱՄՆ | 4. «Ֆիատ» - Իսպանիա |

- 2. Ընտրել պետություն – բնական հարուստ ռեսուրսներ» համապատասխանության ճիշտ շարքը.....1 միավոր**
- | | |
|--------------|--------------------------|
| 1. Ֆինլանդիա | ա. երկրաջերմային էներգիա |
| 2. Նորվեգիա | բ. անտառանյութ |
| 3. Շվեդիա | գ. նավթ |
| 4. Իսլանդիա | դ. երկաթաքար |

1. 1 - բ, 2 - գ, 3 - դ, 4 - ա
2. 1 - դ, 2 - գ, 3 - ա, 4 - բ
3. 1 - բ, 2 - դ, 3 - գ, 4 - ա
4. 1 - ա, 2 - բ, 3 - դ, 4 - գ